«Սահակ իշխանի այվան»ը կարծուած վայրը քանի տարի առաջ փորած, քանի սրբատաշ քարեր և սիւներ հանած են։ Եթէ խուզարկութիւն լինի, շատ հնութիւններ դուրս պիտի գայ։

Մի ուրիշ գիւղացի ևս բլուրի գագաթն սկսած է վարել՝ որ ցանք անէ, սակայն սորա «զօրքը» (սուրբը) սպառնացաւ վտանգել նմա, եթէ շարունակէ վարելն։ Այժմ ժողովրդեան բերնին մէջ այս վայրը սրբավայր կը յորջորջուի։

Գերեզմանատեղիք երեք են, մին բլուրից 50 մեթր արևմուտք գնուած բարձր հողակոյտի մի վերայ 3000ի չափ կոշտ տապանաքարերով, երկրորդն ևս նոյնչափ հեռի ի հարաւ 1000ի չափ քարերով նոյնպէս. սա հին է և կասուի «Ֆրանկաց գերեզմաննոց»։ Այս գերեզմանատան աջ և ձախ կողմերն բաւական հեռուներն թէև տապանաքարեր չը կան, բայց հաղարաւոր մարդոց կմախքներ հողի մէջ իրար վերայ կուտակուած են։ Սորա քիչ արևելքն մի աննշան թրքական գերեզմանոց կայ։

Այս գիւղացւոց մեծէն փոքրը կոռնէփշտիկի (ուրվական) կը հաւատան։

Քանի քանի անգամ այս գիւղն յաճախած եմ մի աւանդութիւն և ապացոյց գտնել թէ արդեօք Ս. Սահակայ վախճանած բլուր գիւղն այս է, հաղիւ կարողացած էի այսչափ աւանդութիւն գտնել, նաև գիւղացիք ինձ ցոյց տուած են մի գերեզման՝ անընթեռնելի գրերով, որոյ վերայ ևս կաւանդեն թէ մի հրաշագործ վարդապետի գերեզման էր։

Գիւղիս ժողովրդեան մի մասն աղքատ և ծանր հարկի ներքև ճնշուած լինելով՝ սատիպուած են 50—0ի